Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4533

281.684
S-57

2010

ԱՐՁԱԳԱՆՔ ԳՈՐԾՈՅ

ՏԻԳՐԱՆԵԱՆ ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԳԱՂՈՒԱԾ ԱՊԱՅՈՅՑ ԵՒ ՏԵՍԱՐԱՆ

ԳՐՔԷՆ

ԿՇԻՌ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ [illegible] ԻՆՉԵՒԻՆ ՔՈՒՄ

ԿՇԻՌ [illegible] ՊԻՂԾ Է ԱՌԱՔԵԼՈՅՆ
(Ա[illegible] 1)

ԶԻ ՈՐՈՎ, ԶԱՓՈՎ, ԶԱՓԷՆ [illegible] ԶԱՓՈՎ, ԶԱՓԵՍՑԻ ԶԵՂ

ՄՏ. Է. 2

ՔՈՆԳԷ ՈՉ ԻՆՉ ՕԳՆԵՍՑՆԵՆ ԳԱՆՁՐ ԱՆՕՐԻՆԱՑ. ԱՅԼ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ՓՐԿԷ Ի ՄԱՀՈՒԱՆԷ ԱՌ. 2։ 35

ՎՆԱՆ ՉԷ ՈՉ ՍՈՎԱՄԱՀ ԱՌՆԷ ՏԷՐ ՁԱՆՁՆ ԱՐԴԱՐՈՑ ԲԱՑՑ ՁԿԵԱՆՍ ԱՄԲԱՐՇՏԱՑ ԿՈՐԾԱՆԵՍՑԷ

ՔՈՆԳԷ ՊԻՂԾ Է ԱՐԴԱՐՈՑ ԱՅՐ ԱՆԻՐԱՒՔ ԵՒ ՊԻՂԾ Է ԱՆՕՐԻՆԻ ՈՒՂԻՂ, ՀԱՆՆԱՊԱՐՀ ԱՌ. Լ. 27

ԿԱՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՇՀԵԱՆ ԵՌԱՍԱՒՇԵԱՆ ԵՂԱՆ
— ՌՇՅԹ —

281.64
S-57

281.6q
S-57

ԿԻՐԱԿՈՍԻ ԳՈՐԾՈՑ

ՏԻԳՐԱՆԵԱՆ ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՔԱՂՈՒԱԾ
ԱՊԱՑՈՅՑ ԵՒ ՏԵՍԱՐԱՆ
ԳՐՔԷՆ

Հրշ. Մ. Աշճեան

ԿՇԻՌ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՈՒՆԻՑԻՍ Ի ՁԵՌԻՆ ՔՈՒՄ

ԿՇԻՌ ՆԵՆԳՈՒԹԵԱՆ ՊԻՂԾ Է ԱՌԱՋԻ ՏԵԱՌՆ
(Ա–Էջ. ԺԱ. 1)

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Մ. ԱՇՃԵԱՆ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ ԽԱՆ
— 1880 —

ԱԶԴ

Այն տեսարանը որ Տիգրանեան Գեր. Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոսի վրայօք եղած զրուցատրութիւնները և կրած վչտալի նեղութիւնները կը պարունակէ իւր Ադոյոյ Ի Տէրութեան Ազգային 30 տեսակ ցաւոց և պատժոց գրքէն առնելով կը հրատարակեմք, զիտցուցնելով այն ամէն անձանց, որք յիշեալ Գեր. Սրբազանի վրայօք առած տեղեկութիւններնուն ոուտ և սխալ ըլալը, և հետեւաբար ողջամիտ ընթերցողաց կը թողումք դատել խոովիչը, չահասէրը, կիրքոտ քինապահը և սխալալը որոնք ըլալը, և արդարասէր ճշմարտախօս ազգասէր անաչառը որոնք են. ի վառս արդարասէր միոյն Աստուծոյ,

Ա. ԱՇՃԵԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясн...на
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ЧЗ445-ա.հ.
35920-62

ԵԹԷ ՉԱՐ ԻՆՉ ԽՕՍԵՑԱՑ ՎԿԱՅԵԱ ՎԱՍՆ ՉԱՐԻՆ ԻՍԿ ԵԹԷ ԲԱՐԻ ԸՆԴԷՐ ՀԱՐԿԱՆԵՍ ԶԻՍ ՕՀ. ԺԸ. 23։

Այո՛, ոչ խօսեցար զչար ինչ. այլ բարի բայց ես հարկանեմ զքեզ, զի դժպիհի եղեր մեզ, և հակառակ կաս գործոց մերոց, և նախատինս զնես մեզ զյանցանս օրինաց, և բամբասես զմեզ մեղօք մանկութեան մերոյ, ծանր է մեզ և տեսանել զքեզ ԺՈՂ Բ. 12։

Վասնորոյ հարկանեմ զքեզ, զի կատարեսցի ինեւ մարգարէութիւնն Եսայի Մարգրէի, որ ասէ տէր։

«Առաքեցից ի նոսա սուր խոովութեան և հարցէ այր «զընկեր իւր, հարցի մանուկն ընդ ծերոյն, և անարգն» «ընդ պատուականի. Եսայ. Գ. 5.»։ Ուրեմն հրամանէ քեզ զոր ինչ առնելոց ես, արա վաղվաղակի, ՕՀ. ԺԳ. 27։ Քանզի «ոչ է յաւիտենական այժ առն, զօրութիւն» «և իշխանութիւն ոչ է տուեալ նմա յազգաց յազգս. Ա-Ե. ԻԴ. 28, քանզի ի վաղուց հետէ տեսի զամբարիշտն վերացեալ և բարձրացեալ որպէս զմայրսն, Լիբանանու անցի և ահա ոչ էր ի նոցանէ և ոչ գտաւ տեղի նորա։

Ուրեմն արդարութիւն արդարոյն իմիրայ նորին և զիցի, և անօրէնութիւն անօրինին իմիրայ նորին եկիցի. վասնորայ ես խանջանս պատրաստ եմ և տամ զերեսս

իմ ի հարուածս, և ոչ դարձուցանեմ. զի պարտ է ինձ ի սոսն սիրելոյ իմոյ վիրաւորիլ և ոչ յօտարաց յուսելք։

Հարց. Զինչ բանք քո ի ձախն
Պատ. Անտի չուեմք ի յաջն
Հ. Ասոցիք որք կան յաջն
Պ. Բաժինք նոցունց ի ձախն։

Զի մատնեսջիք յազգականաց և ի բարեկամաց և աչխարհի աստ զնեղութիւն ունիցիք ուրեմն երդեսցուք.

Քոյդ ընկերք քոյն հոմար ի՞նչ որ կոմ աշխոտել
Նոր դարբոտէ զնոյդ սիրով անդէ ընտ դեղ կրել։

Արդ լուարուք

1844 էն մինչեւ 1870 ազգայնոցս համար կրած աչխատութիւններս, արդեամբ և գործով և ասոնց փոխարէն տեսած վնասս և կրած չարչարանքներս և հայածանքներս տես Հայելի Գործոց Տիգրանեան գրքին, և Գործք Զէյթունի և Զայն Պիլիկիոյ տպեալ ի Պոլիս 1846 69 և 70 ին տետրակներուն մէջ։ Ուր որ կնճռոտ խնդիրները լուծուած և ամէն բան պարզուած ճշմարտութիւնը երեւան եկած է։ Եւ դարձեալ սակաւ ինչ յիշելով զանցիցն, և ապա ձեռնարկեմք 1870 ի զանցիցն պատմել։ Անուսիկ.

Հ-լ-ծ-ն -ա-ջին. Երբոր ուզեցինք 1844 ին Քիւրտիստանու ժողովրդոց մէջ ընթերցմունք և գրագրութիւնք, կարգ և կանոնք և կրթութիւնք մտցնելու իսկոյն նոյն տեղւոյն կղերականներէն շատ վնասներ կրեցի և հալածուեցայ, մինչեւ որ ըստ կարելւոյն սակաւ ինչ նախակրթարաններ, մանկավարժներ մտցուցինք մէջերնին, տասը տարուոյ ժամանակ, երբեմն գործեցինք և երբեմն դադրեցանք եւայլն. ինչպէս հետեւեալ պատպարիարքի նամակէն ալ կը յայտնուի մեր ըսածները։

Գերապատիւ Սիրելի.

Գրութիւնք առինք. զի ժողովուրդն, չնորհակալ է զձէնջ և մանաւանդ դպրոցներ հաստատելու և անչափաւոր աչխատութենէդ, զի որով բերկրեցոյց զմեզ և ըզ կրկին ժողովս, և զլրութիւն ազգիս։

Իսկ Մեր վանահարց եւայլն. խոչնդոտն լինել բարեկարգ ընթացից ձերոյ ոչ սակաւ արտմեցոյց զմեզ, անձնապահ լեր առ ժամանակ ինչ ի Մուչ երթեւեկելոյ մինչեւ գրեսցուք առ գերապատիւ Արքեպիսկոպոսն Կարնոյ և Մշոյ։

Արդարեւ բազում վչտաց և նեղութեանց տանիք. իսկ վարձք և հատուցումն անբաւ են յԱստուծոյ և յԱզգային կառավարութենէ, և վարժարանի համար գնածդ գրեանց դրամն Մեծ. Արապեան Գէորգ Ազգային դրկէք.

1854 դեկ. 31
ի Պատրիարքարան Հայոց

ՅԱԿՈԲ ԱՐՔ ԵՊԻՍ.
Պ. Կ. ՊՕԼՍՈՅ

Վերջապէս որ և իցէ մեծագոյն մասամբ կղերականներէն հալածուելով 1858 ին եկի Պոլիս և Ամենապատիւ Գէորք սրբազան պատրիարք Սամաթիոյ Նոր-Թաղ Գլխագիր սուրբ Յակոբ եկեղեցին քարոզիչ կարգեց. ուր որ ուխտաւորի մի եղաւ հոն ամենայն ազգաց, և ժողովրդեան բազմութեան մեզ հետ ունեցած համակրութիւնը և ջերմ սէրը, յարուցին մեր վերայ Պոլսոյ ոմանք

կղերները թշնամի, և ժողովրդոցմէ մեզ եկած կամաւոր նուէրք և պարքեւքն ալ, մեր վերայ անհաշտ թշնամի կարգեց ոմանք չահասէր աշխարհականները, երբոր ա-նոնց յուսացած մեղնէ նիւթապէս չահ մի չտեսան, վասնորոյ մեր վերայ շատ մի անուանարկութեան թերթեր և տետրակներ գրեցին և տպելով հրատարակեցին, տա-կաւին Պոլսէն չելած, մեզմէ յառաջ նախատելի տետ-րակները և թերթերը դուրս եկան և գնացին։

Եւ իբրեւ 1861 ին մեկնեցայ Պոլսէն գնացի Բալու և Քիւրտիստան, մեղնէ գաղտնի Բ. դուռնէն Կոտուց անապատ աքսորուելու հրովարտակ մի հանելով կը ղրկեն Կարնոյ կուսակալին, և մենք ալ նոյն միջոցին Պոլիս կուգամք 1863 ին։

Այս եղելութիւնը լսելով բողոքեցի Ազգային Վար-չութեան, երբոր քննութիւնը երկարեցաւ Բ. դուռը կազմեց ազգայնոցմէ մանաւոր մը որոյ նախագահն էր արդի բարձրաշնորհ Տ. Տ. Գէորգ Դ. սրբազնագոյն կաթուղիկոսն ամենայն Հայոց։

Ուստի նոյն ժողովոյ մէջ ամեն բան պարզուեցաւ, արդարութեամբ ճշմարտութիւնն ճառագայթեց ողբմու-թիւն և խաղաղութիւն զիրար համբուրելով. Հայելի Գործոց Տիգրանեան զիրքն ի լոյս ընծայուեցաւ 1864 ին որուն մէջ ամեն կարծիք և կնճիռ խնդիրք լուծուեցան, և մեր 18 ամեայ ազգային աշխատութիւնը մի առ մի յայտնուեցաւ։

Ուստի անօրէնութեամբ վերին տեսչութեան զմեզ կենդանաւ և Պէռաթիւ Բերիոյ, (Հալէպու) Առաջնորդ կարգեցին, գնացինք ի Բերիայ 1866 Յունիս 1 ին։ Եւ Նոյեմբեր 15 ին Զէյթունցիք Լատինկրոն կը լինին, հետեւեալ բարիքը Լատինացոցմէ ընդունելու պայմանաւ.

1. Զորս Զէյթունցի իշխանները Պոլսոյ բանտէն ազատել։

2. Նոցա ընտանիքը Մարաշէն Զէյթուն երթալ։

3. Մարաշին մէջ Զէյթունցի չղթայակապ բան-տարկեալները արձակել։

4. Զրի վարժարաններ բանալ։

5. Տարեկան արքունի տուրքերնին թեթեւցնել։

6. Որ և իցէ հարստահարութիւն մի չկրեն ապա-գային մէջ։

Յիշեալ չորս խնդիրները կատարեցի, վերջին երկու խնդրոյ համար Բ. դուռն խոստացաւ մեզ առաջիկայ մարտին կատարել. ուստի մեր այս աշխատութեան փո-խարէն ազգասէր վեհ Սիմոն պէյ Մաքսուտեանի շնոր-հիւ Բ. դուռն արքունի Մէճիտ երրորդ նշանաւ, և սըր-բազան պատրիարքն ալ եպիսկոպոսութեան վկայակա-նաւ վարձատրեցին զմեզ՝ և ձեռնադրուեցայ եպիսկո-պոս 1868 սեպտ. 15 ին բարձրապատիւ Տ. Տ. Գէորգ Դ. հայրապետն ամենայն Հայոց. և եկի ի Պոլիս Գործք Զէյթունի անունով տետրակը տպեալ ի լոյս ընծայուե-ցաւ որուն մէջ Զէյթունի բոլոր գործերը գրուած են 1869 ին։

Ուստի Զէյթունի եղած ծախուց պարտքին հանգա-նակելու համար Ազգային Վարչութեան որոշմամբ գնա-ցինք Մօլտովալաքիա (Ուլահ-Պուկուան) մինչեւ վերա-դարձայ եկայ Պոլիս, որպէս թէ մնացեալ 2 խնդիրն ալ կատարել, ինչպէս որ, Բ. դուռը խոստացած էր.

բայց դժբաղդաբար Խրիմեան սրբազան պատրիարքացած մեր հետ ատելութեան ոգով սկսաւ վարուիլ և հալածել զմեզ, ինչպէս որ կը հալածէր զայլ կղերները որոնք որ ողջամիտ էին։

Հալածումն երէցութեան։ Հանգանակութեան ժապաւէնեալ տետրակը տուին իրեն 3 օր իրեն քովը մնալէն ետքը տուաւ մեզ բոլոր հանգանակութեան ծախքը ելլելէն ետքը մնացածը տուինք պարտքը, մնաց 8000 դահեկան բաց պարտք, որուն համար կը ապասէի անօրէնութեան մը, յանկարծ յանձնաժողով մը կազմեց վերստին տումարը մեզմէ առնելով սկսան քննել, երբոր մէկ խարդախութիւն մը չգտան, գոնէ վնաս մը հասցնելու համար պօլսոյ մէջ ըրածս հանգանակութիւնը գրեցին և ընդունեցին, և եղած ծախքը չընդունեցին, —հա՜ երդ-ը-ր-ի՜-մէ՛ թէ՛ հաշի՜-մը, այս վնասը մեզ տալէն ետքը, ձեռք զարկաւ ուրիշ վատութիւն մը ընել որ է։

Հալածումն երէցութեան։ Ծնունդեան գիշեր, երբոր ժամարար պիտի ըլլայի, իմաց տուաւ մեզ, թէ վրադ բողոք կայ եթէ ժամարար ըլլաք զքեզ տաճարէն վար պիտի քարշեն, եւայլն, մենք այս մտոտի զրոյցին կարեւորութիւն չտալով պատարագեցինք, և ժողովուրդը գոհ սրտիւ մինչ ցվերջը պատարագին կենալով և ապա արձակեցաւ տեղը գնաց, վերջը բողոքագիրը և բողոքը ուղեցինք իրմէ, բայց ոչ բողոքագիր և ոչ բողոք եղած և կայ եղեր, աս ալ այսպէս։ Խրիմեան սրբազան ասով ալ գոհ չըլլալով հետեւեալ վնասը մեզ հասցնելու եկաւ։

Հալածումն ըրդրդ։ Երբոր Աւագ ուրբաթու գիշեր

և իմ քարոզչութեան եկեղեցւոյ մէջ կտակը պիտի խօսէի Սափրիչեան այսինքն (պէրպէրեան) Տիմոթէոս աբեղան, եկած դասը կանգնէր և լուսաբար տէր Սուքիասը մեզ խմաց տուաւ, թէ սրբազանի հրամանը այս է, որ Պէրպէրէ ողն պէտ է կտակը խօսի Ա Զատիկ պատարագն ալ պիտի ընէ, մենք ալ շատ լաւ ըսինք, և լռեցինք, վասն զի, նկատեցի Խրիմեան սրբազանի երկու տետակ դիտաւորութիւնը այս բանիս մէջ, Ա. մենք անոր դէմ դնելով, որ նա ալ այսինքն Տիմոթէոս լրբաբար մեր վերայ արձակելով և ժողովրդեան մէջ խռովութիւն մը ծագիլ, և Բ. Զատկական ժամացէն զմեզ զրկել, և որպէս թէ ցաւ մի տալ մեր սրտին։ Իսկ Աստուծոյ արդարութիւն նոյն Զատկի կէս գիշերէն սկսեալ մինչեւ ցլոյս արեւուն սաստիկ անձրեւ մը բերելով, եկեղեցին մարդ չկրցաւ երթալ։ Եւ Տիմոթէոս աբեղան ալ մինակ պատարագեց, իսկ զարմանալին այս էր, երբոր Խրիմեան սրբազան ոմանց եպիսկոպոսաց և ծայրագոյն վարդապետաց կտակ ջարկէ սոյն մեր պաշտօնը վարելու, նոքա կը հրաժարին ըսելով, չէ՜ երդ-ը-ն, և երդ-ը-ր-ի՜-ն, բացի Սափրիչեանէ որ ընդունեց։

Հալածումն հինգերրդ։ Ասկէց ալ գոհ չըլլալով սրբազան Խրիմեան, համոզեց քիւրտիստանցի Խակնտար անուն Էմէկը, մեր վրայ խնդրագիր տալ Բ. դուռը, որպէս թէ մեր վրայ 3000 դահեկան առնելիք ունի, աս ալ Հիւսնի բաշայի ներկայութեամբ տուա ելլելով մնաց ամօթով։ Աս ալ չյաջողեցաւ այս անգամ հաշուատումարս պահել տուաւ, և հրատարակեց Տեղրանեանը վերուցէք, այսինքն գողցէր, ասկէց ալ մէկ խռովութեան ձայն մը ինձմէ չելաւ, որ շատ կսպասէր, բայց իզուր մեր վանանը ցօրայ համբե-

բութիւն էր։ Ասկէց ի զատ սկսաւ չարիվարի դրօշներ Երուսաղէմայ տունը հաւաքել մեր վրայ չարիվարի գրելու, և յօդուածներ տալ լրագրաց թերթերուն մէջ։

Ասով ալ գոհ չըլլալով երբոր Բերիոյ Նիկողոս կաթողիկոսէն հեռագիր մի կուգայ մեզ. երբոր չավուշը կը բերէ պատրիարքարան, Խոխման սրբազան խաբելով զչավուշն մեր հեռագիրն կառնու կը բանայ և կը կարդայ։ Հինգ օրէն ետքը կիմանամք և կուզեմք իսկ ինքը կուրանայ, և հեռագրատունէ ճիշդ պատճէնը կը բերինք, և ապա ամօթով կուտայ մեզ, այս խաբէութեան համար թէ հեռագրատան վերակացուն և թէ երեւելիքն արքունեաց համոզել կը ջանային զմեզ, որ բողոքեմք, առ այս մասին պետութեան, մեք եւս համբերելով զանց առինք. վերջապէս բարձրաշնորհ Խաչատուր կաթուղիկոս զմեզ հրաւիրեց յիւր սենեակ և ըսաւ, եղբայր ԱՌԱՔ ԱՆՀՈՒՔ ԵՒ ԱՆԱՊՈՒԱԾ ՀԱՐԸՆԿ ԷՆ, քեզ մեծ վնասներ պիտի հասցնեն, գիշեր ցերեկ քեզ համար կը խորհին եւ ինչ. եթէ ինձ մտիկ կընես թող գնայ ասկից։

Ուստի օգոստոս 25 չոգենաւ մտայ գնացի հայրենիքս։

ԸՆԴԱՌ ՕՐՈՐ ՀՈՂԷ ԴԷԼ ՁԷՐԲ ՀՈԼԾԵԼ։ Ահաւասիկ. Տիգրանակերտ հաղիւ թէ 6 ամսոյ չափ խաղաղ օրեր անցուցինք. Պոլսոյ Խարբերդցի Սարգիս Վարդապետն անդադար յղեցին Յակոբ եպիսկոպոսին վերայ, ուստի եկաւ խռովութիւն մը մեծ, մինչեւ անգամ Միւթասարիֆի առջեւ մին եպիսկոպոս միւսն ծայրագոյն վարդապետ սկսան զատ վարել կառավարական ատեաններուն մէջ ձիրար հալածելով։ Ուստի մենք ալ զմեզ ատ խռովութենէն ազատ պահելու համար. գնացինք Բարձրահայեաց վանքն, ուր որ խնդրանօք քանի մը երեւելի անձանց դիւերօթիք վարժարան մը բանալ վանից մէջ, զի որովհետեւ Բողոքականք վարժարան բացած էին չրջակայ գիւղօրայս. և Օհաննէս վարդապետ Առաջնորդն, այնքան անհոգ անձ մի էր (վարուք որպէս թէ ճգնաւոր) և ոչ մի փոխասաց ունէր վանից մէջ բացի արբեցող միաբանիցն, որ 18 տարի կը շարունակէր առաջնորդութիւնը, ինչ և իցէ, շատ մը խրատ և յորդոր կարդալէն ետքը առաջնորդին, հաղիւ թէ համոզելով այդու պայմանաւ որ վանից իրաւունքէն կամ վանահօրմէն և կամ վիճակէն մէկ դահեկան անգամ չուղել, այլ դուրսէն կամ մեր քսակէն։ Ուստի Խարբերդու վիճակէն 9040 ղրշ. հաւաքելով բերինք Օհաննէս վարդապետին յանձնեցինք որ վարժարանի չինութեան ծախս ընէ, և տուաւ մեզ հետեւեալ անդորրագիրն, և գնացինք ի Տիգրանակերտ, որպէս թէ խռովութիւնը խաղաղացած էր։

Ահա անդորրագրին ճիշդ պատճէնը, որ իսկը քովերնիս կը պահուի.

Գերապատիւ Տիգրանեան Մկրտիչ արքեպիսկոպոս սրբազան հայրը իւր կամաւոր ուխտը սրբոյ Տաճարի ամենօրհնեալ անարատ և միշտ կուսի Աստուածածնի կատարելէն զկնի, որոյ արդիւնքն զորս երեր վանիցս վարելն չինութեան ճեմարանին այս է.

1872 ապրիլ 22

2160	ղրշ.	**45** լիտր բամպակ
1136	»	**12** » » մանած
250	»	**7** զոյգ խարար
4158	»	ողջ դրամ
756	»	**350** տրամ արծաթ
8460		փոխադրելի

8640 ղ. փոխադրեալ
598 բանվակի և խարբերթի ծախքերը
9058

Օսմանցի ոսկին 118 ղ. էն հաշուեալ ընդունեցինք Սոյն լինն հաղար յիսուն ութը դահեկանն ճեմարանի շինութեան.

Ուստի ի միամտութիւն նուիրատու ժողովրդոց խարբերթու և ի հաւատարմութիւն յիշեալ բազմերախտ սրբազան հօր կատորագրեմք սոյն հաշուեցուցակ անդորրագիրն։

Առաջնորդ Բարձրահայեաց վանից և վիճակին
ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. Տ. ՊՕՂՈՍԵԱՆ

Երբոր վերոյիշեալ արդիւնքը առաւ, ուրախանալով իսկոյն շրջաբերականի օրինակ մը գրեց, ցոյց տուաւ մեզ ոչ այնքան վարժարանի համար, որքան վանից անուամբ չահ և օգուտ կը բնտռէր։ Ինչպէս որ շրջաբերականի վերջին տողերուն մէջ կերևի, որ ատ շրջաբերական ալ ցամիթ տալ տուաւ 5 հարիւր օրինակ և հրատարակեց։ Ահա պատճէնն.

Օրհնութիւն և ողջոյններ գրելէն ետքը . . . կ՚ըսէ. հիմակուց իմաց տալուս պատճառն այս է, ով ոք իւր տղան տալու միտք ունի հիմակուց մեզ իմաց տայ, և ճեմարանի շինութեան համար եթէ բարեհաճի նուէր մը և յիշատակ մը ընելու ըլլայ, կը խնդրենք ժամ յառաջ գրկելու շնորհք ընեն . . .

Ի Վ.անս Բարձրահայեաց Առաջնորդ ՅՈՎ. Վ.
1872 մայիս 1 Տ. ՊՕՂՈՍԵԱՆ

Իսկ մեք Տիգրանակերտու մէջ նստելով, կոպասէի վարժարանի շինութեան լուրը առնել, մէկ քանի ամիս անցաւ, իմացայ որ Օհաննէս վարդապետ դրամը իւր կամաց ծախս ընել սկսէր։ Ուստի սրտնեղութեամբ խկոյն տիւրկէր Պետրոսը և Գրագրը առի գնացի վանք ձեռք զարկինք, նախ 20 տղայի համար ննջարան. նստարան, և դրասեղան չինել տալ, մինչև որ ատոնք չինուեցան հաղար ու մէկ խօսք խօրաթա և արգելքներ տիւրկերներու գլխուն հանեցին, երբոր կարդն եկաւ որ վարժապետ բերել և տղայք հաւաքելու, որքան որ Տիգրանակերտու Յակոբ եպիսկոպոս և Օհաննէս վարդապետ Ք-Ը-Ը-Ը-Ը-Ն էին. իսկ վարժարանը չբացուելու համար միաբանեցան որովհետև եպիսկոպոսը 25 տարուան և Օհաննէս վարդապետը 18 տարուան առաջնորդք էին, տակաւին վարժարանի մը հոդ չէին տարած, իսկ մեր աշխատութիւնը անոնց ամօթ պիտի բերէր, վանորոյ ըսպիտակ թուղթի վերայ ստորագրութիւն և մօր դնել տուին տղէտ մարդկանց մեղնէ դաղտնի, զոր ինչ գրեցին, գրեցին. յղեցին Խրիմեան սրբազանին, նա ալ առանց բացատրութիւն ուղելու հետեւեալ գիրը կուղղէ մեզ։

Գերապատիւ սրբազան եղբայր ի Քրիստոս

Այս միջոցիս առածնուս լուրերնուն նայելով Արղնոյ վանուց մէջ վարժարան մի կանգնել ուզած էք, ուստի խուովութիւն ծագեր է, մինչեք անտի եղեալ Մշոյ սուրբ Քհանանէսու վանքը, հոն մնաք մինչև ցնոր անօրինութիւն։

1872 սեպ. 12 Պ. Կ. Պոլսոյ ՄԿՐՏ. ԵՊԻՍ.
թիւ 155 ԽՐԻՄԵԱՆ

Ասոր պատասխանին գրեցի

Առանց քննութեան և բացատրութիւն առնելու ո՞ր օրէնք կը հրամայեն դատապարտութեան վճիռ տալ, կը խնդրեմ արդարութենէ չզատուիլ, քննութեան հետևիլ։

1872 սեպ. 28 ՄԿՐՏ. ԵՊԻՍ.
ՏԻԳՐԱՆԵԱՆ

Զգեցի վանքը, ըսելով. Ողջ-ալ լեցէ յեղ ոՒՆ յեր ՈՒԵՐԿ եկայ Տիգրանակերտ և նստայ տեղս։ Հետևեալ նամակը եկաւ։

Գերապատիւ սրբազան եղբայր ի Քրիստոս

Ակէց յառաջ սեպ. 12 թիւ նամակաւ ծանուցինք ձեզ երթալ Մշոյ վանքը, մինչ ցարդ տեղդ էք, և չի ներուի ձեզ այդպիսի գործոյ վարժարանի ձեռնարկ ըլլալ, բարեհաճիք անխաբան Մշոյ վանքը երթալ։

1872 նոյ. 6. թիւ 244 Պ. Կ. ԽՐԻՄԵԱՆ

Գրեցինք ատոր պատասխանը։

Իմ կարողութենէս վեր է այս ձմեռան Մշոյ լեռները երթալ, ես իմ տեղս թարց պաշտօնի նստած եմ, քանի որ սուտը ճշմարտութեան դոյնով ներկուած կընդունիք, քննութեան չէք հետևիր, միայն կիրք և ատելութիւն կը տեսնամ։

1872 դեկ. 14 ՄԿՐՏԻՋ. Ե. ՏԻԳՐԱՆԵՆ.
ի Տիգրանակերտ

Դարձեալ նամակ մը եկաւ

Գերապատիւ սրբազան եղբայր ի Քրիստոս

Աղգային վարչութեան որոշումը յարգելով անմիջապէս փութաք երթալ Մուշ սուրբ Օհաննէս վանքը, և հոն սպասել մինչև ցնոր անօրինութիւն։

1873 մարտ 14 ԽՐԻՄԵԱՆ Պ.
ի Պատր. Հայոց

Պատասխանեցի.

Մինչև որ դատախազ ո՞վ էնէ, ինձ չը յայտնէք քննութիւն չըլլալի, յանցանքս չգիտնամ. տկարութիւնս չի ներէր կամաւս այս ձմեռան Մշոյ ձիւնաւոր սառուցեալ լեռները ողջունել, ներեցէք մեզ խաղաղ տեղս մնալ։

1873 ապրիլ 30 ՄԿՐ. Ե. ՏԻԳՐԱՆԵԱՆ

Ասոր պատասխան չտալով Բարձրագոյն դրանէ հեռագիր մի Տիգրանակերտու կուսակալին կուգայ, զմեզ Մշոյ վանքը դրկելու համար, ուստի սեպ. 10 ելի Տիգրանակերտէն, եկի Մակաբայեցւոց վանքը, և անկից հոկ. 30 ին Սղերդ, Բաղէշ, ի Մուշ. սուրբ Կարապետու միաբանութենէ հրաւէր գալով տարին զմեզ վանքը. վիճակէն եկած քահանայացուները ձեռնադրել տուին, և նոյնպէս Մանրավանից, սուրբ Ախբերկայ, և Մատին Առաքելոյ և Թարգմանչաց, վանօրէից, վանահարց և Մշոյ փոխանորդից և վիճայնոյ վկայականօք չատ քահանայացուներ ձեռնադրել տուին. ձեռնադրեալներն ալ

է որ մի ոսկի և է որ երկու և է որ երեք ժամոց տուած են մեզ. շատ քիչ կը գտնուի 3 ոսկի կամ 2 տուօղ բայց Մշոյ մէջ սովորութիւն կայ եղեր, մէկը որ քահանայացուները քահանայացունելու համար նորա ընծայ մի կուտան եղեր. առ ձեռնադրող եպիսկոպոսն բարեխօսելու համար։ Մեր դէմ յանցանքը սա եղեր է, որ վանահարց վկայականը բաւական սեպելով ձեռնադրեցինք։ Եթէ յառաջմանէ գիտցած ըլլայի, պիտի ղրկէի անոր ընծայատուներ, որ ղրպարտութեամբ լեցուն սուտը ճշմարտութեան գոյնով չը ներկուէր պատրիարքարանի մէջ գտնուօղ թշնամիներուս դար, այո՛, թշնամիներ, եթէ թշնամի չէին մեզ, պէտք էր մեղմէ բացատրութիւն ուզել և քննութեան հետեւիլ, բայց ոչ այնպէս ըրին, այլ և, բոլոր սուտերը ճշմարտութեան գոյնով ներկուած սուրբ Էջմիածին կը ղրկեն ի Պատրիարքարանէն։

Ուրեմն սպասեմք սուրբ Էջմիածնի դահէն գալիք վճռոյն։

Հիմայ մենք Մշոյ դաշտի ձիւնէն, ո՛չ կրցանք վանքին մէջն երթալ, և ոչ Մշոյ քաղաքն, մնայինք խոնաւ դաշտի դիւղերէից մէջ մինչև յմայիս, եկանք 'ի Կարին, իմացանք Թրիմեան սրբազանի անկումը, և մեր ձայն Կիլիկիոյ տեսարակին մէջ գրուած դուշակութեան ի կատարումն սկսիլը, գրեցի շնորհաւորութեան գիրը նոր պատրիարքին, և ընդ նմին վարչութեան խնդրագիր, երթալ ի վանօրայս Վանայ ուխտագնացութիւն և օգտակարութիւն, և եթէ պատեհութիւն գտնամ միտք ունիմ սուրբ Էջմիածին երթալ, 1874 յուլիս 2. գիրը գնաց Պօլիս 4 օր ետքը ծնկացաւ մը պատահելով մինչեւ սեպ. 20 առողջութիւն չգտայ և բժիշկներէն ալ անօրինեցին մեզ խոնաւ երկիր չմնալ, երթալ Ուրֆա

Հալէպ, Տիգրանակերտ, որ չունին խոնաւութիւն, ուստի պատրիարքարան գրած նամակիս պատասխանը չառած գնացի Տիգրանակերտ, սկսայ անկողնոյ ծառայել. ըսինք դէրբ հալածել, ոչ այլ ուրէք այլ է հաւատոց Ճոլցեալ հայցեալ խոնարհարար կղերականաց դէմ։ Յուլիս 2 ին գրիս պատասխանը հոկտ. 18 ին եկաւ ձեռքս հասաւ։

Գերապատիւ սրբազան եղբայր ի Քրիստոս

Ձեր գերապատուութեան Վանայ վանօրայք երթալ չըլլար ուղղակի սուրբ Էջմիածին պէտք է որ երթաք. ահա առ վեհափառ սրբազան Հայրապետին ալ յանձնարարական գիրն ներփակեալ գրուս ձեզ ուղղեցինք։

1874 սեպ. 18 Պ. Կ.
թիւ 889 ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊ.

Տակաւին ծնկացաւօք կը տագնապէինք, պատրիարքարանէն մեր վրայօք գրուած դանդատին պատասխանը սուրբ Էջմիածնէն կուգայ, և Պատրիարքի փոքր նամակաւ կոնդակին պատճէնը մեզ կուգայ. որ է հետեւեալն։

Առ սրբազան պատրիարք Կ. Պոլսոյ

Տ. Ներսէս Արք եպիսկոպոս

Գէորգ ծառայ Քրիստոսի . . . եւայլն սիրելւոյ մերում խնդալ ի Տէր։

Ընդ գրութեանդ [illegible] առ մեզ 12 յու-

35920-62
ՀՍՍՌ Գրքերի Պետական Գրադարան
Гос. Библиотека
ZUUՌ-Арм ССР

լիս անոյ տարւոյս ընդ համարաւ 453 հասին ի ձեռս մեր թուղթքն քննութեան (որ բնաւ երբէք իմ մասին քննութիւն եղած չէր, և չէին ընէր որչափ որ կը բողոքէի,) եւ պատճէնք պէս պէս դրուածոց յաղաքս Երեմիայ և Մկրտիչ եպիսկոպոսաց ամբաստանելոց իբրեւ զակատեալս զհետ կաչառաց և ապօրինաւոր ձեռնադրութեանց :

Ընթերցեալ մեր զդրուածսն զայնոսիկ գտաք զնոսին թերակատարս ըստ բաղում գլխոց · իբր զի չտեսաք ի նոսին բացատրութիւնս մատուցեալս յամբաստանելոց անտի երիցուցն եպիսկոպոսաց առանձինն յօդուածովք հանդէպ միոյ միոյ յամբաստանութեանց անտի նշանակելոց ի տեղեկագիրսն մատուցեալս ի հարցաքննողաց և ի հարցաքննելոց :

Այնու ամենայնիւ այս ինչ յայտնի է զի եպիսկոպոսունքն այնոքիկ եկեալք երբեմն այսր վկայագրովք պատրիարքին Կ. Պոլսոյ Պօղոսի արք եպիսկոպոսի, արդ ի Տէր հանգուցելոյ և հանրագրական խնդրուածովք ժողովրդոյ վիճակացն Խարբերդու և Բերիոյ, ձեռնադրեցան առ ի մէջ ի վերայ վիճակացն այնոցիկ :

Յայնժամ իսկ պարտաւորեցին նոքա զանձինս իւրեանց վաւերական խօստմամբ ըստ օրինակի այլոցն եպիսկոպոսաց առ ի մէջ ձեռնադրելոց չձեռնադրել երբէք զոգէստս և զանարժանս ի սպասաւորութիւն եկեղեցւոյ և ոչ կատարել բնաւ ձեռնադրութիւնս արտաքոյ վիճակի իւրեանց :

Սակայն որպէս երեւի ի քննական դրուածոցդ մին ի նոցանէ այն է Երեմիայ . . . իսկ միւսն որ է Մկրտիչ եպիսկոպոս Տիգրանեան, ճշնի ապացուցանել և հաստատել, որպէս երեւի ի նոյն դրուածոց, թէ հրամանաւ

Առաջնորդաց վարդապետաց և վանահարց արարեալ էին ձեռնադրութիւնս այնպիսիս :

Քաջայայտ իսկ է ձերումդ խոհականութեան, զի զի յորժամ հովիւք եկեղեցւոյ և Խատրիարքարան ինքնին յանհոգս կան, և կամ պատճառս տան, իւիք իրաք խանգարման եկեղեցական կանոնաց · եւս քան զեւս յաճախեն զեղծմունք և անկարգութիւնք այսպիսիք :

Յօրոց մին և այն է զի եպիսկոպոսն Երեմիայ . . . եւայլն :

Իսկ Տիգրանեանն եպիսկոպոսն որպէս լու եղեւ մեզ թէպէտ և գնալ գնայ զառաջինն յիւր, բայց ապա պատճառելով զպատճառս ինչ, որք ցարդ եւս զանխուլ մնան առ ի մէջն · մեկնեալ ի բաց երթայ ի սեփհական վիճակէն և աստանդական թափառի · (թող ներուի մեզ այս տեղ ըսելու · մեք պատրաստուեցանք ի Բերիայ վիճակս երթալու Խուիմսան արքազան իսկոյն լրագրաց թերթով զմեզ պաշտօնէ անկեալ հրատարակել տուաւ ·)

Արդ այս ամենայն անկարգութիւնք որպէս և սիմոնական ձեռնադրութիւնք, արդարեւ իսկ դատապարտ առնեն զանկարգ գնացս երկոցունց . . . . բայց զի և ներկայ քննութիւնքդ թերի էին և անբաւականք ի պատուհասել զնոսին . . . եւայլն : Թիւ 305

1875 հոկտ. 8 ԳԷՈՐԳ Դ. ԿԱԹՈՂ.
ի Սբ. Էջմիածին ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Երեմիայ եպիսկոպոսն արդար թէ մեղաւոր ես չեմ գիտէր : Բայց ՝ի վերայ եղած դէպքերուն դէմ բողոքեցի, և բողոքանացս դրերը պատրիարքարան լցուեցաւ, իսկ ոչ մին Կրօնական ժողովոյ անդամոցն կրցաւ մեզ պատասխանել, թէ՝ այսպէս կամ այնպէս, հապա ի՞նչ

ԸՍԻՆ , ոչ այլ ինչ , ԱՂԵՆ ՄԵՆՔ հակառակ իւր սուրբ կոչման և արդարութեան , լուսոյին և խոտորեցան զուտն ճշմարտութեան գոյնով ներկողին հետ , ներկեցին և ղրկեցին ի սուրբ ԷՋՄԻԱԾԻՆ , իսկ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ պատասխանեց թէ , ԱՆՔԱՆԻՒ ԵՒ ԸՆԴՈՒՆԻՒՆ . ինչ և իցէ , ատ հաղածանքն ալ անցաւ ։

Եղաւ որ 1874 սեպ. 4 Փիլիպոս վարդապետ եկաւ Տիգրանակերտ , և 1875 փետր. 20 ստիպուեցաւ պատճառէ մի առժամանակեայ կերպիւ քաղաքէն մեկնիլ , (հոս տեղ պատճառն ինչ ըլլալը մեզ հարկ չէ բացատրել , քանզի իրեն հետ կը չրջի ուր որ երթայ ։ Ուստի հետեւեալ նամակը մեզ կը յղէ ։

Գերապատիւ Սրբազան Հայր .

Մեր Արդնի երթալոյ առթիւ Ազգ. ընդհանուր ժողովն իւր 13 րդ. նստովն քուէարկելով զՁեր Գերապատուութիւն մինչ ցգալուստ մեր փոխանորդ ընտրեց , ընդ նորին ընդհանուր ժողովոյ հրաւիրանաց , նա և մեք թախանձանօք խնդրեմք որ հաճիք ընդունիլ այդ պաշտօնը , քաջայոյս եմք չմերժել այդ ազգօգուտ առաջարկն ձեր ազգասիրութեանը ։

1875 փետր. 25
Ի Տիգրանակերտ

Տեղապահ
ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴ.

Ես Ընդհանուր ժողովոյ հրաւիրանաց գիրն ալ , ասոր յար և նման ։

Ստորագրութիւն

Ատենապետ
Թովմաս Մենոլլճեան

Ատենադպիր
Յովհաննէս Գալաղաշեան

Մենք հրաժարական տալով չուզեցի . պատճա՞ռ

ծնկացաւս , ուստի վերատին գաւառական ժողովը , քաղաքին բոլոր երեւելիները և բոլոր ժողովականները միաբան բերին հետեւեալ գիրը տուին մեզ ։

Գերապատիւ Սրբազան Հայր ,

Գաւառական ընդհանուր ժողով ձեր տէրութիւնը անցեալ օր հրաւիրեց քաղաքիս առաջ. տեղապահութեան պաշտօնը վարել , բայց հրաժարականով բացասական կարդացեր էք , ձեր տկարութիւնը պատճառ ունելով , և այս իրաւամբ . սակայն այժմ ժողովոյ բոլոր խումբ խնդրելով կը խնդրեմք ի սէր ազգութեան հրամել գալ առժամանակեայ պաշտօնը վարել ձեր խոհեմ ընթացիւք ։

1875 փետր. 26 Ստորագրութիւն 51

Մեծ պահոյ սկիզբէն սուրբ Զատկի կիւրակին պաշտօնը վարեցի , Փիլիպպոս վարդապետ եկաւ մեք հեռացաք պաշտօնէն տեղս նստայ , որ և իցէ ձեռնամուխ չեղայ գործիմի . թէեւ կը հրաւիրէին . իսկ Փիլիպպոս վարդապետ որ միշտ անգիտութեամբ կը գործէր ապադայն չմտածելով , անկէց իրեն ապդայնոցմէ որչափ յորդոր կը խօսուէր ապագայն մտածել , իսկ ինքը ոմանց երիտասարդաց առաջնորդութեամբ գործել և մտիկ ընելուն , պակասութեան մէջ կը գտնուէր և չատ անգամ իրեն նպատակին չհասնելուն համար , կը կարծէր զմեզ իրեն հակառակ և գործոյն արգելք , բայց չէր խորհէր իրեն բռնած ընթացից վնասակար ըլլալու վրայօք , այլ և զմեզ պատճառ բռնելով սկսաւ մեր վրայօք բերանը եկածը խօսիլ մեր բացակայութեան և ատեանի մէջ , իսկ մեզ լուր կը բերեին մեք զանց առնելով չէինք լսեր , ե-

զաւ որ այդքանով չբաւականալով Պատրիարքարան կը գրէ մեր վրայօք։ Ուստի Պատրիարքարանէն սկսաւ նամակ գալ թէ Պոլիս եկուր։

Ա. Հեռագիր.

Տիարպէքիրաէ Տիգրանեան Մկրտիչ էֆէնտի

Պաղը խերլու իշլեր իշիւն սէրիան Տէր-Ալիէյէ կէլսին։

1291 Հազիրան 12 Արդէն Փորէյէն

Նամակ Ա.

Գերապատիւ սրբազան եղբայր ի Քրիստոս

Ասկէց յառաջ հեռագրով ուղած էինք զձեզ ի Մայրաքաղաքս գալ, հեռագիրը համառօտ էր, հետեւաբար անկարող բացատրել մեր հրաւիրման շարժառիթն ու նպատակն, այս անգամ կը փութամ նամակաւս կրկնել մեր նախորդ հրաւէրը, յայտնելով թէ, կարեւոր պատճառներ կան, որ կտրելն զմեզ Ձեր գերապատուութեան հետ անձամբ խորհրդակցիլ, տնօրինել և կարգադրել ինչ որ վայելուչն է, և օգտակար Ձեր և Ազգին համար.

Քաջալերս եմք որ սոյն նամակս ոտանալուդ առանց վարանելու Ձեր ուղեւորութիւնը կը փութացնէք անկասկած լինելով։ Պ. Կ. Պոլիս

1875 հոկ. 10 ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊ.

Պատասխանեցի

Ներէցէք այժմ հէնց ըլլալու չեմ կարող գալ, Ձեր

սրբազնութեան խորհած և տնօրինածը լինձ համար ընդունելի է, իսկ ողջանալուս պէս անպատճառ պիտի գամ

ՄԿՐՏ. ԵՊ. ՏԻԳՐԱՆԵԱՆ

Բ. Հեռագիր.

Տիարպէքիրէ Մէլէթ պէյնէրէ ալան միւնազանն տաֆի իշիւն խատամպօլա կէլմէնիզ մէճլիսճէ գարար վէրիլմիշ տիր թէլէկրաֆ թարղընտան 10 կիւն զարֆընտա եօլա չըգմանըզ, չըգմատըղընըզ հալտէ մէսուլիէթի ազիմէ թահտընտա դալաճաղընըզ իխթար օլունուր, թէլէկրաֆլա ճէվապընը վերէսիկիզ։

92 Քեանունի սանի 28 Էրդէն Փորէյէն

Հեռագրեցի

Էմրուզէ օլուռէմ ղորընըզ պիլտիրմիշիմ. գըշըն չիտէթինտէն եօլա չըգամամ. միւսաատէնիզլէ մարտ տօգուզունտա եօլա չըգարըմ մէքթուպում եօլտա տըր։

Մուհարրէմ 16 Մէրուէ Եպէկ.

Մինչ ցայս վայր լսեցիք եկած գրերը և գացած պատասխանները, արդարութիւն որ կոչմ ըլլալը յայտնի կերեւի, ուրեմն անկէց ետքը եկած գրերուն մտիկ ընենք

Եւ նամակ մի ալ գրեցի բօստայիս այսպէս.

Ամենապատիւ սրբազան հայր.

Տիգրանակերտ իմ երեսէն խռոված չէ երբէք, եթէ այսպիսի գանգատ մի կայ իմ վրայօք, գանգատանաց

նամակին կամ հանրագրին պատճէնը չնորհք ըրէք մեզ տեղս դատուելու և ապա Պոլիս ֆամէ եւայլն ։

Ասոր պատասխանը հետեւեալը առինք այսպէս ·

Թէլէկրաֆը Լրագրատան տէր հալ Տիարպէգիրտէն չրգուպ Ըստամպօլա կէլմէնիզ դաթիէն իսթար իսէրիմ։

92 մարտ 11 Էրդէն Բարբէյ

Ամ հաֆէրը առնելով ամենայն տկարութեամբ և կայ Խարբերթ և հեռագրով իմացուցի Խարբերթ գալ և տկար ըլլալս , 15 օրէն ետքը եկայ Խարբերթէն եկայ Մալաթիա , և ապա հետեւեալ հեռագիրն եկաւ ։

Խարբերդս ֆալմայուղ վերիլէճէք գարարա տէկին Բալուտա իգամէթ իչիւն օրայէ կիթմէնիզէ գարար վերիլմիշ տիր ։

92 Ֆիսան 15 Էրդէն Բարբէյ

Մալաթիայէն եկայ Ակն որ երթամ Բալու , իսկ Բուսիոյ պատերազմի պատճառաւ ճանապարհները յետինատիճան խառնակ և աղաղնեբէն պաշարուած ըլլալով Ակնեցիք զմեզ առաջնորդ կը խնդրեն ըլլալու , մենք չենք ընդունիր , վերջը վանքը նստել վանահայրութիւնը կընդունինք , այդու պայմանաւ որ՝ պատրիարքարանէն մեզ կոնդակ բերեն ։

Ահա Ակնեցոց խնդրագրին պատճէնը ·

Սրբազան Հայր

Առաջարկուեցաւ ձեզ Ակնայ վիճակին առաջնոր-

դութեան պաշտօնը և չընդունեցիք , իսկ վանահայրութեան պաշտօնին գալով խնդիրքնիս չպիտի մերժես , զի որովհետեւ բոլոր վիճակայնոց փափաքելի խնդիրը այս է Ձեր սրբազնութեան,գոնէ վանքը մնալ վանահայրութեան պաշտօնը վարել , և ընտրեցաք զձեզ վանահայր սուրբ Փրկչայ վանիցս և գրեցաք ի Պատրիարքարան , յուսամք մերձ աւուրցս գալուստ վանահայրութեան կոնդակիդ ·

Սորֆէրոբէնդ

Վանակն խորհրդոյ ։ Հանագրի 158

187 Յունիս

Իսկ պատրիարքարան Ակնեցոց խնդիրը մերժելով չի հաստատեր , ուրեմն ըսեմ· կեցցէ պատրիարքարանի կիրք և ոգին առելութեան որ վասն իմ։

Ուստի հետեւեալ Նամակը կուգայ ։

Գերապատիւ Ս· եղբայր ի Քրիստոս ։

Ընքուշի ժողովուրդն հանրագրութեամբ կը խնդրեն զձեր գերապատուութիւնը , կեդր· Վարչութիւն արժան դատեց թոյլտուութիւն ընել Ձեր գերապատուութեան , երթաք ի Ընքուշ առանց առաջնորդական պաշտօնի հոգեւորապէս մխիթարել զԸնքուշի ժողովուրդը և հոն մնալ մինչեւ յետոր տնօրինութիւն ։

1876 օգոս· 10 Պ· Կ· ՆԵՐՍԷՍ

Ասոր ալ պատասխանեցի · Ձեր՝՝ Քէրիմէսրան է առանց Էմիր Սամիի արքունի հրամանագրի չեմ կարող երթալ և մանաւանդ առանց պաշտօնի ։

Դարձեալ մանակ մի եկաւ ։

Գերապատիւ եղբայր ի Քրիստոս ·

Ձեր Ակնայ վիճակին մէջ մնալ տեղիք չունի · եթէ Ընքուշ երթալ չուզէք փութայք ի Պոլիս գալ , և կամ ի սուրբ Էջմիածին գնալ , ապա թէ ոչ ձեզ համար կրստիպէք վարչութիւնը ազգու միջոցներու դիմելու ։

1876 հոկ· 14 Պ· Կ· Պոլսոյ

ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵ·

Ատ միջոցին Ընքուշէն , յատուկ հետեւեալ հանրագիրը եկաւ ։

Գերապատիւ Տիգրանեան սրբազան հայր ·

Լուաք ի Տիգրանակերտէն մեկնիլ դէպի Պոլիս երթալդ , մեք բոլոր Ընքուշի գաւառական ժողովն և համայն ժողովուրդք կը խնդրենք զձեզ մեր վիճակին Առաջնորդ և Պոլիս ալ պիտի գրեմք եւայլն ։

1876 ապրիլ 28 Սարգիս· 103

Ասոր ալ պատասխանեցի ։

Իմ կամքս չէ եթէ Պատրիարքարան հաճի ես ալ կընդունիմ . բայց Պարէնարան մերժեց մեզ պաշտօն տալը ։

Նոյնպէս Ըմշկածագի գաւառական ժողովը և բոլոր վիճակայինք հետեւեալ հանրագիրն մեզ կը յղեն ·

Գերապատիւ սրբազան հայր

Գաւառական ժողովս զՁեզ առաջնորդ ընտրեց վի-

ճակիս Ըմշկածագու , խնդրեմք ընդունել զխնդիրս մեր տալ զհաճութիւն զի գրեսցուք ի Պատրիարքարան ։

Սարգիս· 103

Ասոր պատասխանը գրեցի ·

Եթէ Պատրիարքարան հաճի ես ալ կընդունիմ եւայլն։

Պատրիարքարան ես ալ մերժելով կը պատասխանէ · Տիգրանեանին պաշտօն չկայ տալու , պարոն , չի՛ք պատճառ բոյի՛ չէ՛ Ա պարոնեան · ուստի եկայ բազում նեղութեամբ ճանապարհի ի Սեբաստիա , ձմեռը վերա գալով մնացի ի սուրբ Սարգիս եկեղեցի բազում պատուով , և գրեցի վերատին գիր առ սրբազան Պատրիարքն թէ պատճառն ինչ էր զմեզ ի Տիգրանակերտէն հանելով երերուն կը թողուք , և ոչ վիճակ մի տալ կը բարեհաճիք արդ մեզ պաշտօնով տեղ մի ցոյց տալ կը խնդրեմք եւայլն։

Ասոր պատասխանեցին մեզ հետեւեալ նամակովն։

Գերապատիւ սրբազան եղբայր ի Քրիստոս

Ձեր փետրվար ամսոյ 2 թիւ նամակը մատուցաւ Կրօնական ժողովոյ ուշադրութեան ըստ որոշման նոյն ժողովոյ յայտնել Ձեր Ս· եղբայրութեան , ուր որ էք հոն մնաք , եթէ յարմար տեղ մի պատահի ու պաշտօն մի լինի ձեզ իմաց տրուիլ թէ ութեամբ ։

1878 մարտ 6 Խորհրդական Պ·

ԽՈՐԷՆ ԵՊԻՍ·

Դարձեալ պատասխան գրեցի ·

Ամենայի , Ընտրեալի Ըմշկածագեցի , զմեզ ինքեանց առաջնորդ կը խնդրեն , մեք հաճութիւն տալով , կը յանձնեմք պատրիարքարանիդ կամաց , և կը մերժուի խնդիրքն · եւայլն · և հիմայ ալ գրածէք մեզ , եթէ տեղ մի

ըլայ ձեզ իմաց կը տրուի, ուրեմն կը պատրաստուիմ իմ հայրենիքս Տիգրանակերտ երթալ, և կամ Պոլիս գալ։

Ասոր ալ պատասխանը կուգայ հետեւեալը։

Գերապատիւ Ս, եղբայր ի Քրիստոս

Ապրիլ 4 ձեր նամակը զոր ուղղեալ էիք Առ ամեն. Ս. Պատրիարք հայրն, Ազգ. Կեդր. վարչութեան կրօն. ատենին մէջ նկատողութեան առնելէն յետոյ որոշուեցաւ գրել Ձեզ, առ այժմս ո՛չ Տիգրանակերտ կրնաք երթալ և ո՛չ այլ ուր, այլ պիտի մնաք հոն ուր որ էք, մինչեւ ցնոր տնօրինութիւն ըստ Աստուածային կամայ և յաջողութեան։

1878 մայիս 14 Խորհրդական Պ.

ԽՈՐԷՆ ԵՊԻՍ.

Առ ալ այսպէս։ Սեբաստիոյ օդը մեզ հիւանդացոյց, ելի եկի Ամասիա, և անկէց Սամսոն, հետեւալ հեռագիրն եկաւ

Մարսրուանտա գալասրն փոսթա իլէ մէքթուպիմիզ պէքլէյէսինիզ

94 թշրինի սանի Էրմէնէ Բարէկէտ

Ուստի ստիպուեցայ մնալ Սամսոն մինչեւ որ հետեւեալ նամակը եկաւ։

Գերապատիւ Ս. եղբայր ի Քրիստոս

Ձեր հանգստութեան համար որոշեց ժողովն Ս. Էջմիածնայ վանքը երթաք, առանց բնաւ պատճառներ մէջ բերելու հպատակիք և երթաք ի սուրբ Աթոռն։

1879 ապրիլ 10 Փոխանորդ Պ.

ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ.

Մինչ ցայս վայր, տեսաք Պատրիարքարանէն եկած գրերը որչափ իրարու հակառակ. առաջին հեռագիրը կը հրաւիրէ զմեզ ազգայնոց օգտին համար խորհրդակցելու Լայն տես 114 երեսն, և երկրորդ հեռագիրը զմեզ խռովարար ցոյց տալով, եկ տեղդ եկուր Պոլիս որ տեղդ խաղաղի. Լայն տես երես 115։ Երրորդ հեռագիրը կը հարկադրէ ժամ յառաջ Տիգրանակերտէն ելլել. տես 116 երես։

Ծնկացաւոյս պատճառաւ կարգիլուիմք քաղաքէն ելլելու վաղ ընդ վայթ, ուստի թշնամին անհանգիստ ընելով սրբազան Պատրիարքը. որ մեր բաղմաթերթ բողոքագրերն լսել չտալէն ի զատ, կը թելադրէ ստիպմամբ Բ. Դրան զմեզ խռովիչ ցոյց տալ և հետեւապէս արքունի հեռագրով տեղւոյն կուսակալին հրաման յղել կուտան թէ ատ խռովիչը դուրս հանել Պոլիս ղրկել. իսկ հին և նոր կուսակալք Բ դրան կիմացունեն թէ խռովիչն Տիգրանեանը չէ այլ Փիլիպոսն է, և Բ դուռն ալ Սրբազան Պատրիարքին երբոր կիմացնէ, իսկոյն դարձեալ Բ դուռը կը որոշեն գրել. և կը գրեն. թէ Փիլիպոսը չէ այլ Տիգրանեանն է, պէտք է Տիգրանակերտէն հեռացունել զանի, տես Մասիս թերթին 1792 թիւն ուր որ ընդարձակ գրած հրատարակուած է։ Բ դուռը եւս վերատին կը հեռագրէ, Տիգրանակերտու կառավարութեան թէ Ս Պատրիարքն կը սնդէ թէ խռովիչը Տիգրանեանն է. կառավարութիւնը զարմանալով վերատին կը հեռագրէ թէ Տիգրանեանը չէ այլ Փիլիպոսն է այս անգամ Բ դուռը Ս. պատրիարքին հաղորդելով, ալ ինչ ընեն. որ Տիգրանեանը վնասուի. ուրիշ հնար չկայ մինակ միջոց ցունացՍ. Պատրիարքին ձգենք ատ քընութիւնը, որ նորա մին եպիսկոպոս հոն կթուածով

անդամալուծութեամբ յանկողնոյ կը ծառայէ և 30 տուն ժողովուրդ ունի, Փիլիպպոսն ալ անոր բարեկամն է, հարկաւ անկէ գիր մը կառնու կը գրէ, թէ Տիգրանեան է խրոմիչ։ Ահա Բ դուռը Յունաց Ս. նախկին Պատրիարքին կը յանձնէ սա քննութիւնը ըստ խնդրանաց մեր Ս. Պատրիարքին ուղածնուն պէս այլ ձեւով իմն ձեռնարկութեամբ կը հասնին իրենց փափաքանաց, վասն զի Տիգրանակերտու յիշեալ Յունաց առաջնորդն մեզ լուր կը գրէ, թէ Բարձրագոյն դուռնէն մեր Ս Պատրիարքին յանձնուէր Ձեր և Փիլիպպոսի վրայօք եղնուելիք քրն նութիւնը, Ս Պատրիարք մեզ գրեր է հիմայ ես չատ տկար եմ Աստուծով հանգստանալուս կը հրաւիրեմ զձեզ և Փիլիպպոս վարդապետն, և քանի երեւելեաց քաղաքիդ դէմ յանգիման խօսիք և յայնժամ զարժանն կը գրեմք ի Պոլիս եւայլն։

Ուստի ալ ոչ հարցնող եղաւ և ոչ հրաւիրող, Մասիս թիւ 1820, 1876 մայիս 25 թերթին մէջ տեսանք որպէս թէ Յունաց եպիսկոպոս քննութիւն ըրած զմեզ խռովիչ իմացուցած և Մասիսն ալ հրատարակած է։

Ուրեմն Նոր-Դար 2131 և Հայրենիք 125 129 թիւ թերթերուն հրատարակածը կարդարանայ, թէ Պատրիարքարան . . . և առանց դատի . . . խաբելով զկառավարութիւնը վարդապետները կը դատապարտէ յաքսորանս. սուտը ճշմարտութեան դոյնով ներկուած։

Բայց արդի սրբազան պատրիարք ի՞նչ ընէ, և ի՞նչ յանցանք ունի, ազօթէ առ Աստուած որ անխիղճ թշնամոյդ չնորհք տայ որ խաղաղութեան մէջ հանգիստ ըլլաք, և սրբազան Պատրիարքն ալ իրեն ազգային ծանր խնդիրներուն զբաղեալ ցաւը հոգայ և ազատի թշնամոյդ թելադրիչ և հարկեցուցիչ բանիցն։

Ուստի Սամսոնէն եկայ Պոլիս, ուղղակի Պատրիարք սրբազանին ներկայանալու, օրը տարաժամ ըլլալով Հարէնց Մեծ. Մարտիրոս էֆէնտին Իւսկիւտար իրենց օրհնեալ տունը տանելու տիպեց զմեզ, ուստի մենք ալ ի պատիւ վսեմ, Մարտիրոս էֆէնտիին գնացինք։ Բայց սակայն Արշանեան ազնիւ Նշան յարգելին մեր դիմաց Սրբազան Պատրիարքին յղեցի սուրբ աջը առնելով իմաց տալ թէ՝ ՇՐՖԵՆԵԼԻ ԷԼԼ- ՄԷՐՈՒՆ ԵՊԷՆԴԻ ՍԱՂԱՄԷ ԶԵՐ ՍՐԲՈՒԹԻՒՆՆԷՆ ՊԷՏ ԷԱՐ, ներեցէք օրը տարաժամ ըլլալուն Մեծ. Հարէնց Մարտիրոս էֆէնտին տարաւ իրեն տունը վաղը պիտի գայ Ձեր սրբազնութեան։

Ատոր կը պատասխանէ Ս. Պատրիարք։ Թող չէր ՝ այ ես անոր հետ էարթ ըլնիմ։

Ինչ և իցէ, սա լուրը առնելով չգնացի վասն զի իմացայ որ թշնամին է բանն և ոչ Ս. Պատրիարքին, և համբերելով տասը օրէն եաքը գնացինք, աջը առինք հրաման ըրաւ նստանք սուրճ մի բերել տուաւ, եւ ապա հարցուցինք խոնարհաբար զմեզ ուզեր էիք, ինչ հրաման ունիք։

Պատասխանեց, հրաման չունիմ։

Ուրեմն յանցանքս ի՞նչ է։

Պատասխանեց յանցանք չունիս։

Ապա ուրեմն, մեզ տեղ մի չնորհ ըրէք նստելու։

Պատասխանեց դուք տեղ չատ ունիք, ահա Զրահեան Մեծ Սարգիս էֆ. տունը գնայ հոն կեցիր, եւայլն. երբոր այս պատասխանը առինք. դարձեալ Աստուած օգնական ըսինք ու եկանք դուրս. խորհրդածելով թէ իրաւի պօլսոյ մէջ սրտակից բարեկամ չատ ունիմք, կարելի է բայց եկեղեցի չըլլալուն Մեծ. Զրահեան Սարգիս էֆէնտիի օրհ-

նեալ տունը մեզ ցոյց տուաւ մինչեւ որ բաց եկեղեցի մը պատահի, որովհետեւ եկեղեցիք վարդապետօք լցուած են, իսկ Զրաճեան էֆէն. որ 1864ին եւ 1869ին զմեզ տարիներով իւր օրհնեալ բնակարանը տարաւ եւ մահագոյժ հիւանդութեանս մեծ խնամք տարաւ, ինձմէ զատ երանաշնորհ Ախթամարու եւ Սրբոյ Խաչատուր և Նիկողոս կաթուղիկոսները Սեբաստիոյ ծերունի Կարապետ եպիսկոպոսը տարիներով իւր օրհնեալ բնակարանի մէջ պահելով խնամք տարեր և Ս. Պատրիարքի բարեկամ, ուրեմն Ս. Պատրիարք լաւ ըսաւ, բայց յանցանք չունիս ըսելն ի՞նչ էր, և զիս տեղէս հանել Պոլիս եկուր, Բալու գնայ, Զնքուշ եկուր, Էջմիածին գնայ, Սեբաստիա կեցիր, տեղ մի երթար, Մարսովան կեցիր, Էջմիածին գնայ, և հոն տեղ հանգստացիր, եւայլն։

Ահա 40 ամեայ վարդապետ և 12 ամեայ եպիսկոպոս և մանաւանդ ազգայնոցս ամենայն հաւատարմութեամբ աշխատող և 71 ամեայ հասակաւ ծերունի մի ի՞նչ իրաւունքով այսպէս թափառական կընեն, Աստուծմէ ոչ երկնչին, եւայլն։

Եթէ քահանայից ձեռնադրութեան համար այսպէս կը՞նեն, ահա վանահարց և առաջնորդաց վկայականները, եթէ Տիգրանակերտու մէջ խառվարար էի, ահա չորս տարի եղաւ որ քաղաքէն մեկնած եմ և մանուանդ չատ բողոքներ գրեցի Պատրիարքարան, բողոքներուս մտիկ չըրին, և չպատասխանեցին անգամ, եթէ գանգատաւոր ունէի կը դատուէի անոր հետ յանցաւոր ելլէի ան ատեն պատիժ կրէի, չէնե 7 տարի էր որ հայրենեացս մէջ առանց պաշտօնի և առանց եկամտի նստած օրերս կանցնէի, մեղք չէր այսքան դրամ ազգային պատրիարքարանի սընտուկին հեռագրի և նամակի համար ծախք տալ

թէ՝ եկուր, գնայ, կեցիր, մի գար, եւայլն. նոյնքան ալ մեղմէ ահա կուգամ, կերթամ, եւլն։ Ինչ և իցէ այսօր լման չորս տարի եղաւ որ Տիգրանակերտէն ելած եմ, հիմայ մեծամեծ խառվութիւն հանողը ով է, և ակէ յառաջ Պատրիարքարանի պատուիրակ Մեծ. Պօյաճեան Օհաննէս էֆ. եւայլն փողոցներուն մէջ օտար ազգաց առջեւ քարշն 'ի քարշ ծեծել տուօղն ո՞վ էր, եւ ծեծին տեղիք և պատճառ տուօղն ո՞վ էր, և յետ այնորիկ ատ քրէական յանցանքով գիշերով կառավարութիւնը «Ֆէրլէ» ջորիի վերայ դնելով Տիգրանակերտեն ի պոլիս ղրկուօղն ո՞վ էր. եթէ մենք նայն միջոցին հոն գտնուած ըլլայինք այս քրէական յանցանքը. մեր վերայ դնելով հիմայ ի խաչ հան պիտի աղաղակէին. ինչպէս որ Ֆ-ՎԷՆ բառը իբրեւ կարկտան մեր վերայ դնել ուզելով ի զուր տեղն մինչ ցարդ զմեզ թափառական ըրին։

Դարձեալ 1876 փետրուար ամսոյ մէջ Լուլօեան հաճի Յարութիւն աղայի և անոր եղբոր եւ այլ անձանց հետ կառավարութեան ատեաններուն մէջ խոթինթաղ եղօղն ո՞վ էր եւ եկեղեցւոյ քամբանակը ուրբաթ օրն հնչեցնող բազմութիւնը հաւաքող եւ սպիտակ թուղթի եւ բաղում թերթերուն վերայ խառն ի խուռն բազմութենեն մինչեւ անգամ վարժարանի եւ արհեստաւորաց աշակերտացմէ ստորագրութիւն հաւաքողն ո՞վ էր, որպէս թէ նոր եկող թէֆիք Ահմէտ բաշայէն չնորհակալութիւն գրելու համար. տակաւին անկէց բարիք մի չտեսած։ Ուրեմն կարելի է մեր վրայօք ալ սրտին ուզած չնծու գանկատներ գրած ըլլայ, ո՞վ գիտէ, հապայ հարիւրաւոր սպիտակ թուղթի վերա գրուած ստորագրութեանց եւ կնքոց թերթերն ինչ ըրաւ. մի. գուցէ հրով այրեց եւ ջրով ջնջեց եւ կամ ուզածը գրեց

ատ եւ անդ յղեց, ահա ասոր նման չատ մը վանական գործեր ընողը ո՞վ էր, Տիգրանեանն էր թէ՝ Փիլիպոս հայրն է՞ր։

Արդ միչեւ ցարդ ըրածնին, գործածնին, խօսածնին եւ գրածնին որ մէկը իրաւ եկաւ, եւ որ մէկը կատարուեցաւ թող ցոյց տան։

Ահա այսքան խորհրդածութիւններ ընելով հասանք Իւաքիտարու նաւահանգիստը եւ գնացինք Մեծ. Մ. Աբրահամ էֆէնտիի նահապետական օրհնեալ տունը, եւ կեցանք հոն չորս ամիս եւ վայելեցինք զնորին զարդարեալ բարելից սեղանը, եւ օրհնեցաք եւ կը օրհնեմք, աղօթեցինք եւ կաղօթեմք նորին կենաց եւ օրհնեալ բարեյիշատակ զաւակացն արիւշատութիւն, եւ հանայն նորա պէս հիւրասէր հայոց ազնուականաց ընտանեաց որ կը մխիթարեն ինձ նման վանն արդարութեան հալածեալ վշտակիրները, զի ԿՐՄԱՏ ԱՐԵՐԷՑ ՈՒ ՀԱՐՅԷ ԱՆԻ ԺԲ. 3։

Եղաւ որ Ս. Պատրիարքէն Ս. Խաչ եկեղեցւոյ Թաղ. Մեծ. ազաներ Ս. Պատարագ ընելու համար զիր բերին մեզ Ս. Պատարագ ընել տուին, եւ խնդրեցին տեղւոյն քարոզիչ ըլլալ յանձնառու չեղանք, վասն զի ճերմակեանի եւ ոմանց զիրար հալածելը կար, եւ այն միջոցին Տէվէթլու Սայիտ փաշան զմեզ հրաւիրեց իրեն պալատը Զէյթունի վրայօք տեղեկութիւն ուզեց, մենք ալ ճիշտ ճշմարտութիւնը խօսեցանք թէ Զէյթունցիք յետին ծայր աղքատ եւ սկզբանէ անտի տարեկան քսան հազար ղրշ արքունի տուրք ունէին վճարելու ան ալ հազիւ թէ կրնային վճարել, վասն զի յոյժ աղքատ են բայց տէրութեան ամենահաւատարիմ հպատակ են, չատ աշխատաւոր եւ տեղերնին անբերրի եւ քարոտ, իրենք մերկ եւ բոկ. չարաչար զիշեր ցերեկ լոկ հացի մի հա-

մար երկաթագործութեամբ եւ չօրեպանութեամբ աշխատող։

Եւ այլ չատ մը տեսածս Զէյթինցւոյ թշուառ խըղճութիւնները պատմելէն զկնի, բարձրապատիւ փաշան ցաւ զգալով խօստացաւ խնամք տանել եւ արդարութեամբ բարիք ընել, ուստի չնորհակալ ըլլալով մեկնեցայ եւ եկայ Իւսկիւտար։

Դարձեալ նոյն միջոցին թշնամին մեր վրայօք անուանարկութեան յոդուածները սկսաւ լրագրաց թերթերուն մէջ զետեղել։ Երբոր զրպարտութեանց հերքումն գրեցի յղեցի երեք անգամ ըստ լրագրաց կանոնի համեմատ Մասիս չհրատարակեց, ուստի Բարձրագոյն դրան միջամտութեամբ իսկոյն հրատարակեց, Մասիս 2369 թիւ թերթին մէջ։

Ահա այսպէս զիրար զրպարտելու եւ հալածելու ետեւ ըլլալով օր քան զօր յառաջ յառաջ կը քալենք, ի պատիւ . . . ին, եւ չըսեմք թէ չատ եւ չատ ետեւ մնացեր ենք, Յոյնը եւ Հրէայք Հայոցմէ չատ յառաջ են եւ կարգադրեալ։

Ի՞նչ պէտք է մենք Հայեր զիրար սիրել եւ իրարու բարիք ընել կամ՞ յլէ մեզի, քաւ լիցի, քանի որ ատելութեան եւ խռովութեան վատ ոգին մեզ սիրելի է քան զսիրոյ եւ միաբանութեան ոգին, ուստի զիրար հալածել եւ զրպարտել մեզ համար ոչ մեղք է եւ ոչ ամօթ վասն զի մեր սիրելին է ատելութեան ոգին, որոյ պտուղն է խռովութիւն անմիաբանութիւն, իրարու վնասել եւայն եւայն։

3 Թուականն որ տետրակիս 26 րդ. երեսին մէջ ըսինք, օրաբ հոգէ ԴԷՂ Հայերը զէրար կը հալածեն զրպարտելով։ Անհաւասիկ տես ատորեւ։

Գանք հիմայ մեր թշնամիներուն վրայօք ըսել քանի մի խօսք. վասն զի անոնք այնպէս կը կարծեն որ իրենց մեզի դէմ թէ գաղտնի եւ թէ անուղղակի կերպով զմեզ մարդկանց առջեւ բերանացի եւ կամ լրագրաց թերթերով անսանարկելնին, իրենց փառք եւ պարծանք եւ սրտերնուն հրճուանք, եւ մեզ ցաւ եւ տրտմութիւն ըլլալ կը պատճառեն։

Բայց շատ սխալած են, ինչու որ Քրիստոս Աստուած մեզ կըսէ, ՅԻՇԵՑԷ ԵՒ ՈՐՔԱՆ ԸՆԴՈՒՆԵՑԵՆ ՁԵԶ. . . Մա. Ե. 11։ Ի՞նչու համար այսպէս կըսէ, վասն զի դէշ խօսիլ, զմարդ նախատել. եւ զընկերը ցաւցուցնել, վատ մարդու եւ մարդակեր գազանները, օձերու եւ կարիճներու կը վերաբերի, երբոր մարդ իրեն կատարեալ մարդկութենէն բաժնուելով, գազաններու եւ օձերու կարգին մէջ կը խոնարհի վատութիւն գործելու, ուստի այնպիսիներուն համար աղօթք ընելու ենք որ իրենց վատութեան միջոցով, եւ մեր համբերութեամբ առաքինութեան տէր կընեն զմեզ, վասն որոյ Յիսուս ըսաւ, ՍԷՐԵՑԷ ՍԻՐԱՏԻ ՅԵՐ ԵՒ ԲԱՐԵ ՈՐՈՐԵԼՈՅ ՅԵՐՈՅ, վասն զի ամէն մարդ յանձնառու չլինիր մարդաւլաս գազաններու պաշտօնը վարել ինչպէս որ պատահմամբ մէկը շատ խորունկէն զմեզ խայթած էր լուելեան որ ապագային մէջ թէ մենք եւ թէ մեր բարեկամները ցաւ զգամք։

Բայց Աստուած իսկոյն յայտնեց մեզ, յուլիս ամսոյ մէջ Գատրգիւղ Ֆնտգլեան Մեծ. Պետրոս Էֆէնտիի օրհնեալ բնակարանը ՝գտնուելովս, երեկոյին տետրակ մի բերին յիշեալ Էֆն. ընծայ, տետրակը ձեռքս առնելով մի անգամ բացի եւ տեսի նոյն թերթին մէջ մեր վրայօք զրպարտութիւն մը։

Արդարեւ եթէ իրաւ ալ ըլլար, դրի առնել դրելը անգամ մարդկութեան դէմ է, կատարեալ մարդու մը։

Ահա Սրուանձտեանց գեր. Գարեգին վարդապետ, իրեն ճամբորդութիւնը գրած ատեն թագուն կերպով տետրակին մէջ տեղ կը գրէ, որպէս թէ՝ ԱՆՈՅ ՎՈՒՆՑ ՅԵՒ Ի ՊՈՊՈՒՔԷՆ ԳԷՆՈՒ ԲԷՐԾ ԸԼՍՈՅԵՊ, եւ այլ չվայելած խօսքեր գրեր է մեր վերայ՝ Աստուած իրեն բարի տայ, զարմանալին ատ էր, եթէ տետրակը ծայրէ ի ծայր կարդալու ըլլայի երկու ժամու կարօտ էր, բայց Աստուած այնպէս յայտնեց որ առանց թերթ մի դարձընելու տեսանք։

Ուստի նոյն թերթը առնելով Կրօնական ժողովոյ ներկայացայ, եւ ստիպեցի որ որ չնորհափայլ Գարեգին վարդապետը բերել հարցունել, թէ ատ ի՞նչ է որ տետրակիդ մէջ գրած էք, ՊՈՊՈԽՈՒԹԵՆՆ նա հիմայ չի գըտնուիր ո՞վ գիտէ ուր ըլլալը, նկատեցի որ Կրօն. ժողովոյ նորահաս ոմանք անդամները չեն ուզեր Գարեգին վարդապետի ներկայանալը, և անհնարին է անոր գըտնուիլը մինչդեռ կը խօսէին մեզ, յանկարծ անգիտութեամբ Գարեգին վար. ներս մտաւ հրաւիրեցի տալ բացատրութիւն, ուստի հազիւ թէ այսքան մը կրցաւ ըսել՝ Ես ԳԷՐ ՄԷՏՅԷԼԷՆ ԽՄՑՈՅ ըսաւ ու ելաւ դուրս, և մենք մինչդեռ կը սնդէինք ժողովոյն թէ թոյլ մի տաք երթալ, թող հաստատէ գրածը, նոյն կէտին գեր. Մատթէոս եպիսկոպոս ատենապետ կը պոպոխուէ մեզ նա Ակնայ առաջնորդ ընտրուած է և է, ուստի ինչպէս որ ըսէ անոր պիտի հաւատանք։

Երբ այս պոպոխոնը առինք Աստուծոյ յանձնելով ելանք դուրս նոյն ժամուն բարեկամ և կամ չարա-

կամ մէկը մեզի մօտենալով ցաւ յայտնեց եւ տետրակ մի բացաւ որուն 46 երես 1 տող եւ 73 երես 7 տողերը ցոյց տուաւ մեզ ըսելով, ահա տեսա՞ր սա տետրակը, որ 1874 ապրիլ 9 ին Վանեցիք 30 ստորագրութեամբ տպել տուին, հիմայ աս երիտասարդ վաղապետը ինչ կուզէ ձեզմէ եթէ կամի՛ք լաւ մի նորէն խայտառակենք տպագրեալ թերթով, ո՛չ ո՛չ ըսինք Աստուած զանիկայ թող օրհնէ, ես Աստուծոյ յանձնեցի նա քննող դաղտնեաց և արդարադատ է։

Եւ ապա անգամ մի ալ ներկայացանք Կրօն, ժողովոյ թէ ի՞նչու մեզ տեղ մը ցոյց չի տրուիր, և կամ վիճակ մը, յայնժամ դեր. Մատթէոս եպիսկոպոս կրիւք ըսաւ գիտէք ե՞ Հայելի Գործոց գիրքդ տպագրած օրէն ոխ ի սիրտ հակառակ ենք ձեզ. ուստի խնացանք կիրքերը և զմեզ հալածելու դիտաւորութիւններն, և լրագրաց մէջ անուանարկելու ճիգերնին, վասն որոյ քաչուեցայ տեղս նստայ։ Քանզի օրոր հոգի մեջ դիր՝ էր նը հալածեն Հայեր, տես երես 125։

Եղաւ որ Սամաթիոյ Նոր-Թաղին Գլխադիր Ս. Յակոբ եկեղեցւոյ Թաղ. խորհուրդը մեզ նոյն եկեղեցին Ս. պատարագ ընել տալէն եաքը Ս. պատրիարքին գրութեամբ առժամանակեայ քարոզիչ հաստատուեցանք, սկսանք պաշտօն վարել և ժողովուրդ խուռն բազմութեամբ ամենայն աղգաց սկսան դալ, 1859 թուականի ժամանակին պէս։ Մէկ ամիս լման Մեծ. Քէրէսատէճեան Մ Մարտիրոս աղան զմեզ կերակրեց և ապա կարդաւ Թաղ. խորհրդոյ մեծ. անդամք կերակրեցին, եւ հոկ. 24 ին Պատրիարքարանի Խառն ժողովն հաստատեցին զմեզ առաջնորդ Բաբիլոնի (Պաղտատ) կոնդակը գրեցին Մեծ.

Խաչատուր խան էֆ. ին յանձնեցին, Բայց երբ թաղեցիք լսելով խսկոյն հետեւեալ հանրագիրը բերին մեզ։

Գերապատիւ սրբազան հայր.

Ասկէց 20 տարի յառաջ մեր Ս. եկեղեցին ուխտատեղի մի դարձուցիք, մեծամեծ օգուտներ գործեցիք եկեղեցւոյս, երթալէդ եաքը աւեր դարձաւ, հիմայ Ձեր Բարձր Սրբազնութեան չնորհիւ դարձեալ սկսաւ կարգի մտնալ, խնացանք որ մէնք պիտի մեկնիք, վութացանք այդու խնդրագրով արդիլել և թոյլ չտալ մեզնէ զատուելու, կը յուսամք որ զմեզ տրտում չթողլով պիտի ընդունիք . . . եւայլն։

Ի դիմաց թաղ. խորհրդոյ

Ադենագրէր Ադենագրեր

Պ. ՔԻՐԷՃՃԵԱՆ ՊՕՂՈՍ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Սորբաքրիստոս Թաղեցւոյ 126

1879 դեկտ. 15

Ուստի խնդիրքնին ընդունելով հաւատարմացուցինք մինչեւ Ս. Յարութեան Զատկին մնալ։

Հոկ. 22 ին որ Պաղտատի ժողովրդոց նամակ գրեցինք հարցնելով նոցա հոգեւոր կացութեան վիճակը, հետեւեալ նամակը եկաւ յունվարի վերջ։

Բարձրաչնորհ Տ. Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոս

Սրբոյ աջոյդ համբոյր։

Հոկ. 24 թուականաւ ընկալայ զնամակ օրհնութեան զոր կարդալով ընդունելի եղեւ ինձ գհոամայեալն ի Ձէնջ

. . . ցաւ է ինձ ասել, այս վեց ամիս է վարժատունը դոց է . . . մեծամեծ խռովութիւնք յուզուելով . . . միմեանց անհամաձայն և անմիաբան . . . կարօտ եմք սոյնպիսի կորուստի առաջքը առնող անձնադիր հովուի մը, այլ եւս մնայ ձերին բարեհաճ կամացն . . . եւայլն։

1879 դեկ. 12 Ս. ՄԵՍՐՈՎԲ
Պաղտատ ՔԱՀԱՆԱՑ

Նոյնպէս նամակ մի ալ վսեմ. Մատթէոս էֆ. Մարկոսեանէ առինք Իսկէնտէրէնէն որ վերոյիշեալ նամակին նոյնն էր։

Ցիշեալ նամակներուն պատասխան գրեցի 1880 մարտ 15 ին։ Հետեւեալն է։

Ցետ ողջունի և օրհնութեան. բովանդակութիւնը այս էր։

Մեր նախահայր Հայկը Բաբիլոնի խառնակութենէն և Բէլի անաստուածութենէն փախչելով եկաւ իրեն հայրենիքը մինչդեռ նոյ կենդանի էր, լաւ սեպեց Աստուածպաշտութեամբ կեալ ի խաղաղութեան քան թէ խռովութեան մէջ ճոխ աշխարհի փառօք . . . նոյնպէս և Ձեր հայրերը Հայաստանի խռովութենէն և թշնամեաց նեղութենէն հեռանալով եկած են Բաբելոն որպէս թէ խաղաղ կեանք վարելու, երբոր դուք այժմ խռովութիւնը կը սիրէք եղեր, ալ ի՞նչ հարկ կայ օտար երկրի մէջ մնալ փութացէք Հայաստան և մտէք խռովութեան տունը ուր որ արմատացած է, ողին ատելութեան . . . ալ ի՞նչ պէտք է Քաղթէացոց մէջ իրարու հետ կռուիք և խռովիք . . . : Արդ վսեմ. Մատթէոս

էֆէնտիի հետ ի միասին երեւելի ողջամիտ խաղաղասէր անձանցմէ մասնաժողով մի կազմէք և խռովեալ անձինքը բերէք հաշտեցունէք, որ Ս. Յարութեան զատկի հաղորդութեան արժանի ըլլան, և մեզ ալ հեռագրէք որ ճամբայ պիտի ելլեմ Ս. Զատկէն ետքը եթէ Տէր կամեսցի։

1880 մարտ 12 ՄԿՐՏԻՉ ԵՊԻՍ.
Կ. Պոլիս ՏԻԳՐԱՆԵԱՆ

3 թուականին մէջ ըսինք օտար հոգի մեզ հայեր դէր կը հալածեն և կը ղեղարեն։ Երբոր Գլխադիր Ս. Յակոբ եկեղեցին սկսաւ խուռն բազմութեամբ դիմել մեր յայտնի և աներեւոյթ թշնամին նախանձու չարին հետեւելով սկսաւ դաւադրութեամբ գործել և նորին դրդմամբ Սամաթիոյ քահանայք մեծ պահոց Դատաւորի կիւրակին ժամ ըսին, երեքշաբթի օրն ապրիլ 1 ձգեցին եկեղեցին և ժողովուրդն առանց աղօթքի, և գնացին. երկու օր գոց մնաց Ս. Եկեղեցին, պատճառ՝ չիք բանաւոր պատճառ, ՀՆԻ ԲԱՅԼ ԼԻՆԻ ԳՈՐ ԵՂԵՐ ՀԱՀԱՆԱՅԷՆ ՀԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆ ՊԱՊԱՅՆ ՆԱԽԱՊԷՆ ԲԷՐՍԵԼԷ ՀՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆ ՄԷՋ ՀԱՆԻԼ ՍԼԱՊՕՐԷՆ որ ասիկայ ամէն եպիսկոպոսի պարտքն է հսկել։ Թաղին ժողովուրդ և թաղ. խորհուրդ քահանայից սոյն ապօրինաւորութիւնը տեսնալով, դուրսէն պանդուխտ քահանայ մը բերին, եկեղեցին բացին սկսան ժամ ըսել։

Հիմայ սա մտածելու է, քահանայք որ իրենց պաշտօնն է խաղաղութիւն քարոզել (տես գրքիս 42 երես 10 րդ. աղգային պատիժն, ոմանք քահանայքն. ուր որ ընդարձակ գրուած է,) և մանաւանդ այս Ս. մեծ պահոց ապաշխարանաց օրերուն մէջ իսկ իրենք խռովեալ եկեղեցին կը դոցեն և ժողովրդեան մէջ խռովութիւն ձգելու նկատմամբ կը թողուն կերթան, բայց ժողովուրդ առանց ճաշակի կը վախճանի եղեր, կամ առանց ա-

ղօթքի կընկնայ եղեր և կամ նեղութեան մէջ անմխիթար պիտի մնայ որո՛ւ հոգն է, ահա Պօլիս և ահա գաղթական հայերու Պոլսոյ մէջ ցաւալի վիճակը, և հոգեւորականաց ժողովրդեան վերայ ըրած անարդար գործերը. վասն զի Պարբէարքարան ինդնին յանհոգ կան և պարտաւորեան խանգարման եկեղեցական կանոնաց տես 111 երես տետրակիս ի կենդանի Կաթուղիկոսին։

Այլ գաւառացոց մէջ պատահած եղծումները ո՞վ պիտի մաքրէ լոյսդ որ ի քեզ խաւար է, և խաւարն որչափ մեծ Աստուած ինքն ողորմի, Մարդարէին խօսքը կը լմնայ հոս տեղ, թէ՝ ոմանց նեղեալք խաբեալք խաբէ Երմ. Թ. 4։ Ինչպէս որ 1874 ին Մշոյ Յոհան գիւղի քահանայն աւագ երկուշաբթի օրն, գոցեց եկեղեցւոյ դուռն մինչեւ Յարութեան կարմիր կիւրակէն գոց էր, անկէց ետքը բացաւ նէ չեմ գիտեր, 300 անձ առանց հաղորդի և աղօթից մնացին, թէեւ Ս. Կարապետու վանահօր գրեցինք բայց հոգ տանող չեղաւ, հիմա ալ եթէ պանդուխտ քահանայն չիգար Ս. Յակոբ եկեղեցին չբանար Սամաթիոյ ոմանք զօրեղ քահանայք գոցած էին պէտք էր որ գոց մնար, բայց Քրիստոս ճշմարիտ քահանայապետն բացաւ ոգւոն և ժողովուրդը մտաւ։ Ահա Հայոց վիճակն. օտար հողի մէջ զիրար կը հալածեն, տես Թուանչան 3 երես 25։ Հիմայ կսպասեմ Բաբիլոն զրկած գրիս պատասխանուոյն, պատասխանը ընդունելուս պէս պիտի հեռանամ Պոլսէն որ գոնէ աչօքս չտեսնեմ ընդդէմ կանոնաց լուտանքներ թափող լոկ Հայ անուն կրող չահասէր ինքնահաւան կիրքոտ անձեր և մանաւանդ ոմանք կղերականները որ քահանայութեան պատիւը ոտնակոխ կընեն իրենց անձին շահուն համար, ուրեմն պարտաւորեր հասարակութեան դատողութեանը կը թողուս այդպիսի բարք համարելով։

ՀՍՍՌ-Արմ ССР

ՈՐԴԵԱԿ ՊԱՀԵԱ ԶԲԱՆՆ ԻՄ ԵՒ ԶՊԱՏՈՒԻՐԱՆՆ ԻՄ
ԾԱՇԿԵԱ ՅԱՆՁԻՆ ՔՈՒՄ

ՈՐԴԵԱԿ ՊԱՏՈՒԵԱ ԶՏԷՐ ԶԻ ԶՕՐԱՑՑԻՍ · ԵՒ ԲԱՑ
Ի ՆՄԱՆԷ ՅԱՅԼ ՈՒՄԵՔԷ ՄԻ ԵՐԿՆԶԻՑԻՍ ԱՌ· Է· 1

ՈԶ ՅԱՆԶՈՂԵՍՑԻ ՄԱՐԴՈՑ ՅԱՆԻՐԱՒՈՒԹԵՆԷ
ԱՐՄԱՏՔ ԱՐԴԱՐՈՑ ՈԶ ՀԱՏՑԻՆ ԱՌ· ԺԲ· 3

4533

2013

4391